# Մտավոր հաշմանդամություն ունեցող տնվորներ Բնակարանային պայմանների հիմնավորված ձևափոխությունների իրավունք

## 1. Որո՞նք են բնակարանային պայմանների «հիմնավորված փոփոխությունները»

Կալիֆորնիայում, նահանգային և դաշնային օրենսդրությունը պահանջում է[1], որ տան տերերը[2] հաշմանդամություն ունեցող

---

[1] Տե՛ս Բնակարանների վերաբերյալ ձևափոխությունների ակտը, 1998 թ., 42U.S.C. §§3601 և շարունակ, և Ունրուհի ակտը, Քաղաքացիական օրենսգիրք §§51 և շարունակ: Այս օրենքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս DRC-ի այս Տեղեկատվական թերթիկները՝ *Կալիֆորնիայում մտավոր հաշմանդամություն ունեցող տնվորների բնակարանային իրավունքները; Ինչպե՞ս վիճարկել անկարողության վրա հիմնված խտրականությունը բնակարանների հարցում:*

[2] Յիմնավորված հարմարեցումներ և ձևափոխությունները տրամադրելու պարտավորությունը վերաբերում է մասնավոր տան տերերին, ինչպես նաև պետական բնակարաններ տրամադրողներին, բացառությամբ այն տան տերերին, որոնք ունեն մեկ ընտանիքի համար նախատեսված տուն և միայն մեկ սենյակ են վարձով տալիս տնվորին:

տնվորներին տրամադրեն «հիմնավորված հարմարեցումներ» և «հիմնավորված փոփոխություններ»:Սա հաշմանդամություն ունեցող տնվորեներին տալիս է մյուս տնվորների հետ հավասար հնարավորություն օգտագործելու և վայելելու բնակարանային միավորը կամ ընդհանուր տարածքը: Յիմնավորված փոփոխությունը բնակարանային միավորի կամ ընդհանուր տարածքի փոփոխությունն է, որն անհրաժեշտ է հաշմանդամություն ունեցող մարդու կողմից բնակարանը օգտագործելու կամ վայելելու համար: Այս տեղեկատվական թերթիկում քննարկվում են հիմնավորված փոփոխությունների տեսակները, որոնք դուք կարող եք ստանալ ձեր տան տիրոջից որպես տնվոր, ով ունի մտավոր կամ ճանաչողական հաշմանդամություն, նաև այն թե ինչպես պահանջել փոփոխությունը և ինչ է տեղի ունենում նրանից հետո, երբ դուք ներկայացրել եք պահանջը:

*Ի տարբերություն հիմնավորված փոփոխության, հիմնավորված հարմարեցումը փոփոխություն է տան տիրոջ կանոններում, քաղաքականության մեջ կամ մեթոդներում, կամ բնակարանային ծառայությունների տրամադրման եղանակի փոփոխություն է: Բնակարանային պայմաններում հիմնավորված հարմարեցումների մասին տեղեկությունների համար տե՛ս DRC-ի տեղեկատվական թերթիկը, Մտավոր հաշմանդամություն ունեցող տնվորներ. Բնակարանային պայմանների հիմնավորված փոփոխությունների իրավունք:*

## 2. Ի՞նչ տեսակի հիմնավորված հարմարեցումներ կարող եմ ստանալ իմ տան տիրոջից:

Տան տերը պետք է բավարարի հիմնավորված ձևափոփոխության ձեր պահանջը, եթե այն անհրաժեշտ է ձեզ` բնակարանը ամբողջությամբ օգտագործելու կամ այն վայելելու համար: Դուք պատասխանատու կլինեք ձևափոխությունների ծախսերը վճարելու համար, եթե դրանք անհրաժեշտ չեն ըստ օրենքի այլ պահանջով` բնակարանը հասանելի դարձնելու համար:

Ահա հիմնավորված ձևափոխթյունների մի քանի օրինակներ, որոնք տան տերը կարող է տրամադրել ձեզ որպես տնվորի կամ տնվորի համար դիմողի, ով ունի մտավոր կամ ճանաչողական հաշմանդամություն:

1. Տեղադրել գորգեղեն կամ ձայնամեկուսիչ սալիկներ՝ նվազեցնելու հաշմանդամության հետևանքով ձեր կողմից առաջացվող աղմուկը:
2. Տեղադրել ջերմաստիճանը կարգավորող ջրմուղու ծորակ՝ եռջրով խաշումը կանխելու համար, կամ ավտոմատ ժամաչափիչի՝ գազի վառարանն անջատելու համար, եթե հաշմանդամության պատճառով ձեզ համար դժվար է հիշել ձեր կատարած գործողությունները, կամ
3. Նկարներ կամ գունային կոդերով նշաններ կամ արահետներ տեղադրելը, եթե հաշմանդամության պատճառով դուք չեք կարող օգտագործել գրավոր նշաններ:

## 3. Ինչպե՞ս պահանջել հիմնավորված ձևափոխություն:

Հիմնավորված ձևափոխություն ստանալու համար դուք պետք է այն պահանջեք: Եթե հնարավոր է, պահանջը պետք է լինի գրավոր, և նրանում դուք պետք է խնդրեք, որ տան տերը ձեզ պատասխանի մինչև կոնկրետ ամսաթիվ: Պահանջում դուք պետք է.

1. Ներկայացնեք այն փաստը, որ դուք հաշմանդամություն ունեք,
4. Ներկայացնեք ձեր կողմից պահանջվող ձևափոխությունը
5. Նկարագրեք, թե ինչպես է հաշմանդամությունը օգնելու ձեզ ապրել բնակարանում կամ դիմել դրա համար:

## 4. Ի՞նչ տեղեկություններ պետք է հայտնեմ տան տիրոջը, եթե ես հիմնավորված ձևափոխություն եմ պահանջում:

Եթե դուք ներկայացնում եք հիմնավորված ձևափոխության պահանջ, տան տերն իրավունք ունի խնդրել ձեզանից ապացույց առ այն, որ դուք հ ունեք: Ձեզանից չի պահանջվում տան տիրոջը տալ ձեր կոնկրետ ախտորոշումը կամ ներկայացնել ձեր ամբողջ հիվանդության պատմությունը: Դուք միայն պետք ներկայացնեք նամակ բժշկից կամ այլ ծառայություն տրամադրողից, որտեղ ասվում է, որ դուք հաշմանդամություն ունեք և այն ձևափոխությունը, որ պահանջում եք, անհրաժեշտ է ձեր կողմից բնակարանը օգտագործելու կամ այն վայելելու համար:

Տան տերը նաև կարող է պահանջել, որ դուք տրամադրեք կատարվելիք աշխատանքի նկարագրություն և երաշխիքներ, որ այն կկատարվի մասնագետների կողմից և բոլոր անհրաժեշտ թույլտվությունների առկայությամբ:

Եթե ձեր կողմից պահանջվող ձևափոխությունը կազդի ապագա տնվորի կամ բնակարանը զբաղեցնողի հարմարությունների վրա, տան տերը կարող է բավարարել ձեր պահանջը պայմանով, որ դուք բերեք բնակարանը սկզբնական տեսքի, երբ դուրս գաք դրանից: Սա վերաբերում է միայն բնակարանային ինտերյերի ձևափոխություններին, և չի վերաբերում ընդհանուր տարածքներին: Եթե տան տերը պարտադրում է այդ պայմանը, նա կարող է պահանջել, որ դուք խելամիտ գումար վճարեք առանձին (պայմանական-ավանդային) բանկային հաշվի վրա՝ ձևափոխության վերացման ծախսերը ծածկելու համար:

## 5. Ե՞րբ կարող եմ ներկայացնել հիմնավորված հարմարեցման պահանջ:

Դուք կարող եք հիմնավորված ձևափոխություն պահանջել ցանկացած պահի՝ սկսած բնակարանի համար դիմելու պահից մինչև բնակարանից դուրս գալը: Նույնիսկ եթե տան տերը ձեր դեմ սկսել է վտարման վարույթ, դուք այնուամենայնիվ կարող եք հիմնավորված ձևափոխություններ պահանջել, որոնք թույլ կտան ձեզ ապրել բնակարանում:

## 6. Ի՞նչ է պատահում այն բանից հետո, երբ ես ներկայացնում եմ պահանջը:

Ձեր կողմից հիմնավորված ձևափոխության պահանջ և օժանդակ փաստաթղթեր ներկայացնելուց հետո տան տերը պարտավոր է դիտարկել պահանջը: Տան տերը պետք է ձեզ տեղեկացնի արդյոք նա հարցեր ունի կամ նրան լրացուցիչ տեղեկություններ են պետք: Դուք պետք է պահպանեք ձեր պահանջի պատճենները, օժանդակ նամակ(ները), տան տիրոջ պատասխանը և ձեր պահանջի վերաբերյալ այլ փաստաթղթեր:

Եթե տան տերը կարծում է, որ հիմնավորված ձևափոխության ձեր պահանջը անհիմն է, նա պետք է բացատրի, թե ինչու և առաջարկի այլ ընտրանք: Տան տերը պետք է շարունակի այս բանակցությունը մինչև դուք համաձայնության գաք որոշակի ձևափոխության վերաբերյալ կամ մինչև պարզ լինի, որ դուք չեք կարող գալ համաձայնության:

Եթե ձեր պահանջին տան տիրոջ պատասխանը ձեզ չի բավարարում, գոյություն ունեն նրա որոշումը վիճարկելու բազում եղանակներ: Սրանք ներառում են միջնորդությունը, վարչական բողոքները և դատավեճը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե´ս DRC տեղեկատվական թերթիկը՝ *Ինչպե՞ս վիճարկել հաշմանդամության վրա հիմնված խտրականությունը բնակարանների հարցում:*

## 7. Ինչպե՞ս ես ավելին կարող եմ իմանալ:

Եթե հարցեր ունեք հաշմանդամություն ունեցող մարդկանց բնակարանների հետ կապված խտրականությունից պաշտպանող նահանգային և դաշնային օրենքների, ձեր իրավունքների կամ պարտավորությունների վերաբերյալ, կապվեք Disability Rights California-ի հետ:

Հեռ.՝ 800-776-5746

Տեքստային մոնիտորով հեռախոս՝ 800-649-0154

www.disabilityrightsca.org

Մենք ցանկանում ենք լսել ձեր արձագանքը: Այս տեղեկատվական թերթիկը կարդալուց հետո խնդրում ենք պատասխանել այս կարճ հարցաթերթին և մեզ հայտնել ձեր կարծիքը:

Անգլերեն տարբերակ՝ http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html

Իսպաներեն տարբերակ՝ http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html

*Խտրականության վերացման նպատակով պիտակավորման, խտրականության, նվազեցման և կատարելագործման քաղաքականության ծրագիրը ֆինանսավորվում է ընտրողների կողմից հաստատված Հոգեկան առողջության ծառայությունների ակտով (Նախ. 63) և կառավարվում է Կալիֆորնիայի հոգեկան առողջության ծառայությունների մարմնի կողմից (CalMHSA):*

*County MHSA-ն ֆինանսավորում է CalMHSA-ի աջակցությունը, որն անհատների, ընտանիքների և համայնքների համար հոգեկան առողջության հետ կապված արդյունքները բարելավելու համար աշխատող շրջանների կառավարությունների կազմակերպություն է: CalMHSA-ը տրամադրում է ծառայություններ և իրականացնում է ուսումնական ծրագրեր նահանգի, տարածաշրջանային և տեղական մակարդակներով: CalMHSA մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք http://www.calmhsa.org կայքը:*